

մէկն էլ կը թըլի Պաթմանայ Բիւզի փուղպատ. վերայ, դրեց կարմնջի վերայ:

Որ սկս էրաց. էս էրկու փահլեյան (չէ որ ձեռ թլից փուղպատ, սկուն զախմ է, քիչ մնաց մեռնըն, էնքան զուտուից).—Դաւիթ, ասըն, քիւ բաղդն ինք, զիւ զմի թուղ, որ մինք ըլլինք, աս'զրու¹ խապար տանք:

Դաւիթ ձեռ էդոնց մօտէն կը վերցի:

59. Կնոնք էլ կըլըն կը նստըն:

Սահաթմ էնոնց խիւք չգեայ կնոնց գլխօխ, էնքան որ զուտուաւ էնոնց:

Դաւիթ էսաց.—Դէ', ասէք, է':

Նուր քիչ նաֆաս² էկաւ էնոնց, ըէյն³ առըն:

60. —Մինք քիւ խօր խին ծառէն ի'ք. մինք զքի տարընք Մէլըքի մօր մօտ. էսքամ ժամանակ մինք Մէլըքին ծառայութուն կէնընք, միայ որ զիւ սկնայ զախմ իս, մինք չընք գտի: Էդա Մէլըք մի էոաց թի. «Տարէք կարմնջը վերայ, վըզ կառէք. էնու էրունէն մէ բութիւլ լիք էրէք, բիբէք, իս խմիմ որ իմ սըրտ խօլնայ: Ապա զիւ, որ էգենց կարըն իս, էգենց զախմ իս, մինք չընք խնդանայ, մինք էլ Մէլըքի ծառայութուն չընք էնի. քիւ խօր խաթըր խամար քի էնընք:

Դաւիթ էսաց.—Որ սկուն է, կայնի, էթթանք:

Անիւնք կայնան. իրարու խիտ էկան է Սասուն:

61. Որ էկան Սասուն, Դաւթը խօրօխպէրն է Յեօլան, Վերտօ. շատ խնդացըն, փառք տուըն Ասաուծուն, որ մի աղէն սկնայ կարըն, սկնայ խօրտա է:

Ձիւր յէս որ կուրսըւեր էր. յէս որ փառք տանք Ասաուծուն, որ մի կուրուտոս դնտանք:

62. Շատ էդա Դաւթը վերայ ուրախցան:

Մէկ շաքաթ Դաւիթ քաղքը մէջ ճծիբու խիտ հա կը խաղայ: Մէկ որ սկնայ ըստօր ծառմ էն տե կէր. Դաւիթ ձեռ թըլից էդա ծառըն, էդա ճծիբն էլ թամաշա կանըն: Չէդա ծառ զօւրըց, կօսից, ծէրը խասուց գեարն. զծառը ծէր դալիմ⁴ բանից, էսաց.

—Տղէնիբ սկնայ խաղ կէնըն:

63. Էդա աղէնիբ էկան թամիան Դաւթայ ձեռաց վերայ, ծառը ծէր աբիբ⁵ գեարն:

Էդա աղէնիբ, որ մէ մէկ ճուղ կը բանըն, կըլըն ծառը վերայ, կըլեն, ընտե կը խնդանան:

1 Թրրր.—Աղիկ. սիշտ: 2 Թրր.—Շունչ, հանգիստ: 3 Թրր. Աղեղ, խիւք: 4 Թրր.—Պինդ: 5 Թրր.—Թերեւ կոնիւ: